ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Նախագծային մեթոդի կիրառումը հայոց պատմության դասերին»

Կատարող՝ Միլիտոնյան Աղավնի

Դպրոց՝ Սմբատ Բյուրատի անվան համար 125 հիմնական դպրոց

Առարկա՝ Պատմություն

Կազմակերպություն՝ «Կրթություն առանց սահմանի» ՀԿ

Խմբի պատասխանատու՝ Մ.Գ.Թ.դոցենտ Սիմա Դայան

Երևան 2023թ

«Նախագծային մեթոդի կիրառումը հայոց պատմության դասերին»

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ----------

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ----------

ԳԼՈՒԽ 1.----------

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ----------

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ----------

Ներածություն

Պատմություն առարկան արդյունավետ և հետաքրքիր ուսուցանելու համար անհրաժեշտ են նոր մոտեցումներ, ուսումնական ռազմավարություններ,համագործակցային և ժամանակակից հմտություններ։ Աշխարհը փոխվում է արագընթաց տեմպերով և անկանխատեսելիորեն։ Տեղեկատվությունն ու գիտելիքները ձևավորում են մեր աշխարհայացքը։ Արագընթաց փոփոխությունները մարդուց պահանջում են նոր իրավիճակներին հարմարվելու, ճկուն գործելու հմտություններ: Նախագծային մեթոդի կիրառման նպատակը սովորողների ինչպես մտավոր ու զգայական կարողությունների, այնպես էլ ինքնուրույնության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը ուղղված քայլերն են:**Նախագծային մեթոդ**, խնդրի (տեխնոլոգիաների) մանրամասն մշակման միջոցով դիդակտիկ նպատակին հասնելու մեթոդ, որը պետք է ավարտվի միանգամայն իրական, շոշափելի գործնական արդյունքով՝ ձևակերպված այս կամ այն ձևով (պրոֆ. Եվ. Ս. Պոլատ)։ Այն սովորողների որոշակի գործողությունների հաջորդականությունների, հնարների համադրություն է, որոնք իրականացվում են տրված առաջադրանքը կատարելու նպատակով՝ յուրաքանչյուր սովորողի համար էական և որոշակի վերջնական արդյունքի տեսքով։ Նախագծային մեթոդի հիմնական նպատակն է սովորողներին տալ հնարավորություն գործնական խնդիրների կամ առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ՝ տարբեր առարկաներից գիտելիքների ինտեգրման միջոցով։ Նախագծային մեթոդը հանդիսանում է հետազոտական, պրոբլեմային, ստեղծագործական մեթոդների համադրություն։ **Նախագծային մեթոդը** մանկավարժության մեջ նորույթ չէ։ Այն կիրառվել է ավելի վաղ, քան ամերիկյան ուսուցիչ Ուիլյամ Հերդ Կիլպատրիկի «Ծրագրի մեթոդ» (1918) հայտնի հոդվածի հրապարակումը , որտեղ նա այդ հայեցակարգը սահմանեց որպես «սրտից կատարված ծրագիր»: Նախագծերը կարող են լինել անհատական և խմբային, տեղական և հեռահաղորդակցական։ Վերջինիս դեպքում սովորողների խումբը կարող է նախագծային աշխատանքն իրականացնել Համացանցում՝ գտնվելով տարբեր տարածաշրջաններում։ Ընդ որում, ցանկացած նախագիծ կարող է ունենալ իր աշխատանքային ընթացքն արտացոլող կայքը։ Այսպիսի ուսումնական նախագծի նպատակն այն է, որ պետք է բազմակողմանիորեն լուսաբանվի նախագծի ընթացքում իրականացվող ուսումնասիրությունների և արդյունքի ստացման ողջ ընթացքը։Ցանկացած նախագծի հիմնական նպատակն է տարբեր կարողությունների ձևավորումը, որոնք ժամանակակից մանկավարժությունում անվանում են անձնային համալիր առանձնահատկություններ։ Այն է՝ գիտելիքների, հմտությունների, արժեքների փոխկապակցում, ինչպես նաև համապատասխան իրավիճակում նրանց մոբիլիզացում և կիրառելու պատրաստակամություն:

Նախագծային ուսուցման մեթոդը կիրառվում է ՌԴ-ում, ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, ֆինլանդիայում, Իսրայելում, Բրազիլիայում, ԳԴՀ-ում և մի շարք այլ երկրներում: Ուսուցիչը ստանձնում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դեր: Սա նշանակում է, որ նախագծային մեթոդի հիմքում ընկած է սովորողի ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու, քննադատական և ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը: Նախագծային մեթոդը ուսուցման միջոց է, որը 18-րդ դարում ներդրվել է Եվրոպայում ճարտարապետության և ճարտարագիտության դպրոցներում, երբ ավարտելուց հետո ուսանողները պետք է կիրառեին իրենց ուսման ընթացքում սովորած հմտություններն ու գիտելիքները, երբ պետք է լուծեին օրինակ, հուշարձանի նախագծման խնդիրներ:

Նախագծային ուսուցումը դասավանդողի/դասավանդողների և սովորողի/սովորողների համատեղ կրթական գործունեությունն է, որը նպատակաուղղված է որևէ հիմնախնդրի/հիմնախնդիրների տեսական և/կամ գործնական լուծմանը:

Չինական առած

Ասա ինձ և ես կմոռանամ, ցույց տուր ինձ և ես կհիշեմ, ներգրավիր ինձ և ես կսովորեմ:

Նախագծային աշխատանքի. Կառուցվածքի 5 փուլերը են՝

- Պրոբլեմ /հիմնահարց/
- Պլանավորում /նախագծում/
- Պրպտում /տեղեկատվության որոնում/
- Պատրաստում /նախապատրաստում
- Պաշտպանություն /պրեզենտացիա

Համայնքային խնդիրների հետազոտման ուսումնական նախագիծ

Խնդիրը հետազոտելու և լուծելու համար անհրաժեշտ են որոշակի քայլեր.

- 1. Ուսումնասիրվող խնդրի բացահայտում Որոշել, թե ո՞ր խնդիրն է ավելի արդիական և կարևոր, թե իշխանության ո՞ր օղակն է պատասխանատու այդ խնդրի լուծման համար:
- 2. Տեղեկությունների հավաքում Ուսումնասիրել տեղեկատվական տարբեր աղբյուրներ և տեղեկություններ հավաքել տվյալ հիմնախնդրի վերաբերյալ:
- 3.Լուծման առաջարկ Ընտրած հիմնախնդրի վերաբերյալ ուսումնասիրել իշխանության վարած քաղաքականությունը, ինչպես նաև այլ անձանց կողմից առաջարկվող տեսակետները:

- 4.Զարգացնել սեփական դիրքորոշում հանրային քաղաքականության վերաբերյալ։
- 5.Մշակել առաջարկներ՝ տվյալ հիմնախնդրի լուծման վերաբերյալ։

Նախագծային ուսումնառության ազդեցությունը

Նախագծային ուսումնառության վերաբերյալ հետազոտությունները ցույց են տվել, որ այն բարձրացնում է՝

- աշակերտների մոտիվացիան (Բենդեր, 2012; Բլումենֆելդ և այլք, 1991; Հալլերման և այլք, 2016;),
- դասավանդման նյութի նկատմամբ հետաքրքրությունը (Հոլմ, 2011; Թոմաս, 2000; Չեն և Յոնգ-Ցի, 2018; Շնայդեր և այլք, 2002; Չեն և Յոնգ-Ցի, 2018),
- մետակոգնիտիվ հմտությունները, ինչպիսիք են ինքնակարգավորումն ու ինքնավերահսկումը (Թոմաս և այլք, 1991; Ինգլիշ և Կիցանտաս, 2013)

Հետազոտողներ Հերնանդեզ-Ռամոսն ու Դե Լա Պասը (2014թ.) հետազոտել են նախագծային ուսումնառությունը նաև **պատմության** ուսուցման համատեքստում։ Նրանք դիտարկել են մեկ դպրոցի ութերորդ դասարանի այն աշակերտներին, ովքեր պատմության վեց շաբաթյա նախագծային ուսումնառության են մասնակցել՝ պատմական ակտիվ մտածողության հմտություններ զարգացնելու նպատակով։ Նախագծերի շրջանակում աշակերտները պետք է 19-րդ դարասկզբի ԱՄՆ-ի պատմության մասին փոքր վավերագրական ֆիլմեր ստեղծեին։

Նախագծային ուսումնառությունն ու ներառական կրթությունը

Մի շարք հետազոտություններ ցույց են տալիս, որ նախագծային ուսումնառության մեջ ներգրավված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաները ավելի լավ են կարողանում հասնել իրենց կրթական վերջնարդյունքներին, քան դասական պայմաններում սովորող ԿԱՊԿՈՒ երեխաները (Գիլլիս և Աշման, 2000)։ Օրինակ՝ հետազոտողներ ՄքԱրթըրը, Ֆերրետտին և Օկօլօն (2002) ուսումնասիրել են վեցերորդ դասարանում թեթև հաշմանդամություն ունեցող և չունեցող աշակերտների, որոնք նախագծային ուսումնառության շրջանակում ութ շաբաթվա ընթացքում քննել են 20-րդ դարասկզբի ներգաղթն ԱՄՆ-ում։ Նրանց հետազոտությունը ցույց է տվել, որ ԿԱՊԿՈՒ երեխաներն ավելի լավ են հասկացել պատմական նյութն ու ավելի դրական կարծիք են կազմել հասարակագիտական առարկաներում ինքնուրույն աշխատանքներ իրականացնելու իրենց կարողության վերաբերյալ։

Գլուխ 1

Պատմական «հետքերի որոնում»

Էքսկուրսիաները հիմնականում ձանձրալի, սովորողների պասիվ մասնակցություն պահանջող գործողություններն են;Դրանց փոխարեն սովորողները կարող են պատմական հետքեր որոնեն;

Սա հիանալի միջոց է միջավայրի պատմությունն ուսումնասիրելու, պատմական աղբյուրների հետ աշխատելու,թիմային հմտություններ ձեռք բերելու համար:

Տարբերակները կարող են լինել բազմազան;Սովորողները կարող են ուսումնասիրել քաղաքի տարբեր կառույցներ,բնակելի տներ, տարբեր տեսանկյուններից;ՈՒսումնասիրել պատմական տեսանկյունից կառույցների ճարտարապետական լուծումները. ե՞րբ են կառուցվել,տվյալ ժամանակի քաղաքական,տնտեսական,մշակույթային իրականությունն ինչպե՞ս է ազդել կառույցների ճարտարապետության վրա;

Դիտարկենք օրինակներով.

- Դասարանը բաժանել 4-5 հոգանոց խմբերի,
- տալ պատմական կառույցի՝ «հետքի» որոնման առաջադրանք,
- նախագծի հետազոտական հարցեր
- Կազմակերպել քննարկում, ի՞նչ բացահայտվեց պատմության հետքերը որոնելուց;

Խումբ 1. 4-5 աշակերտ

Պատմական «հետքի որոնման» առաջադրանքը՝Երևանում գտնել հելլենիստական ոճ ունեցող կառույցներ կամ կառույցի տարբեր բաղադրիչներ՝ կամարներ, սյուներ, գավիթներ և այլ ատրիբուտներ;

Օր.՝ - ֍Հանրապետության հրապարակը, ֍Գրքի պալատի շենքը Վ.Տերյան փողոցում;

<u>Նախագծի հետազոտության հարցեր</u>.

-Ե՞րբ է կառուցվել շինությունը

-Ի՞նչու է շինությունը կառուցվել հելլենիստական մշակութային ոճին հատուկ տարբեր բաղադրիչներով՝ կամարներ,սյուներ,զարդանախշեր և այլն;

- Կա՞ արդյոք մշակութային այլ ազդեցություն,որը միահյուսված է հելլենիստական ոճի հետ;

Խումբ 2. 4-5 աշակերտ

Պատմական «հետքի որոնման» առաջադրանքը՝ Երևանում գտնել Հայաստանի առաջին հանրապետության պատմության հետ կապված կառույցներ;

Օր.՝- ֍Հայաստանի առջին հանրապետության կառավարության շենքը Ա.Մելիք-Ադամյան փողոցում,֍ԵՊՀ շենքը Խ.Աբովյան փողոցում, ֍ Առաջին հիվանդանոցի հին մասնաշենքը Խ.Աբովյան փողոցում;

Նախագծի հետազոտության հարցեր.

-Ե՞րբ է ստեղծվել կառույցը;

-Ինչպիսի՞ իրադարձությունների հետ է կապված տվյալ կառույցը,պատմական ի՞նչ համատեքստով է կապված Հայաստանի 1-ին հանրապետության հետ;

-Ճարտարապետական ինչպիսի՞ ոճ ունի տվյալ կառույցը;

Խումբ 3. 4-5 աշակերտ

Պատմական «հետքի որոնման» առաջադրանք՝ որոնել,գտնել ՀՀ քաղաքների՝ (Երևան, Գյումրի, Վանաձոր) գործարաններում և այլ կառույցներում առկա ֍Մինաս Ավետիսյանի, ֍Հակոբ Հակոբյանի հեղինակային որմնանկարները;

Նախագծի հետազոտության հարցեր.

-Քանի՞ որմնանկար եք գտել և որտեղ են դրանք գտնվում;

-Ե՞րբ են ստեղծվել դրանք և ի՞նչ վիճակում են այժմ;

-Նկարչական ի՞նչ ոճ ունեն որմնանկարները;

-Որմնանկարը փրկելու ի՞նչ առաջարկներ կարող եք ներկայացնել;

-Որտե՞ղ կցանկանայիք դրանք տեսնել և ինչու՞ այդ վայրում;

Կարելի է առանձնացնել այնպիսի կառույցներ,որտեղ ժամանակին հնչել են պատմական ելույթներ,օր.՝ Հանրապետության կառավարության շենքում վարչապետ Հովի. Քաջազնունու ելույթը 1918թ դեկ. Հայ-վրացական պատերազմի վերաբերյալ;Արամ Մանուկյանի տունը Արամի փողոցում և այլն;

Խմբերից յուրաքանչյուրը իր հետազոտական նախագծի թեմայով դպրոցում կարող է ներկայացնել ֆոտոցուցահանդես;

Խմբերը կարող են ներկայացնել իրենց աշխատանքներ պաստառների տեսքով, անդրադարձ կատարելով նախագծի հետազոտության հարցերին; Այս ռազմավարությունը արդյունավետ է փորձարկել 9-րդ դասարանում,հայոց պատմության դասաժամին։

Նախագծային աշխատանքը համագործակցային արդյունավետ և արդի մեթոդ է։

Դիտարկե՛նք ևս մեկ օրինակ հայոց պատմության նախագծային աշխատանք։

Թեմա՝<<Ամուսինների նախահարսանեկան և ետհարսանեկան ծիսական վարքը ավանդական ու արդի հայ հասարակություններում>>

Միջառարկայական կապեր

Հայ գրականություն,Հասարակագիտություն,Աշխարհագրություն

Հիմնական հասկացություններ

- 1.Անհատ և պետություն
- 2.Ինքնություն
- 3.Համակեցություն

Ընդհանրական խաչվող հասկացություններ

1.Անհատներ և հարաբերություններ

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ

1.ԳԻՏԵԼԻՔ

• Ներկայացնի՛ ավանդական և արդի հայ հասարակության հիմքը համարվող ընտանեկան՝ նախաամուսնական և ետամուսնական ծեսերն ու ավանդույթները։

• Ներկայացնի՛ 19-րդ դարի վերջ և 20-րդ դարի սկզբին Արևելյան Հայաստանի և 21-րդ դարի Հայաստանի Հանրապետության հասարակական հարաբերությունների հիմքը համարվող հարսանեկան՝ ամուսնական ծեսերը ժամանակի փոփոխության ազդեցությամբ։

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ Պատրաստե՛լ պաստառ << Պատմական զբոսայգի>>
Առանցքային հասկացություններ

- Ծիսական վարք
- Ավանդական հասարակություն
- Արդի հասարակություն

- ✓ Ծիսական վարք

Ծեսը՝ որոշակի կարգ ու կանոնով կատարվող՝ տեղի ունեցող գործողություն։ (հնացած) Ծեսերին խստորեն հետևող, ամեն ինչ ծեսերի համապատասխան անող։

Վարք, գործողությունների ամբողջություն, որն իրականցվում է անհատի, համակարգի կողմից։

- ✓ Ավանդական հասարակություն

Ավանդական մարդը աշխարհն ու կյանքի հաստատված կարգը ընկալում է որպես անբաժանելի է, ամբողջական, սրբազան և փոփոխման չենթակարկվող։ Մարդու տեղը հասարակության մեջ և նրա կարգավիճակը որոշվում են ըստ ավանդույթի և սոցիալական ծագման։Ավանդական հասարակության մեջ մարդկանց մեծ մասն ապրում է տեղական համայնքում, իսկ «մեծ հասարակության» հետ կապերը բավականին թույլ են։ Միևնույն ժամանակ, ընտանեկան կապերը, շատ ամուր են։ Ավանդական հասարակության աշխարհայացքը պայմանավորված է ավանդույթով և հեղինակությամբ։

- ✓ Արդի հասարակության

գործունեությունն ապահովվում է օրենսգրքով, օրենքների փաթեթով, ներկայացուցչական իշխանության օրենսդրական մարմինների կողմից և երաշխավորվում է սահմանադրությամբ։ Բայց դա չի նշանակում, որ սովորութային իրավունքն ու ավանդույթի ուժը այլևս բացարձակապես զիջում են իրենց տեղն ու դերը։ Ավելին՝ բազմաթիվ օրենքներ ձևավորվել են սովորութային իրավունքի հիման վրա և, ըստ էության, դրանց առավել կանոնակարգված դրույթներն են։

- ✓ Օժիտ

Ավանդաբար օժիտը հավաքել են փեսացուներին գրավելու նպատակով։ Առանձնակի հետաքրքրված են եղել փեսացուի ծնողները, ում մոտ պետք է տեղափոխվեր ապագա հարսնացուն։ Օժիտ հավաքելով զբաղված էր աղջկա մայրը։ Օժիտի մեջ ներառում էր վերմակ – ներքնակներ, բարձեր, ծածկոցներ, վարագույրներ, բարձի երեսներ, բազմապիսի ամանների հավաքածուներ, ոսկեղեն, զարդեր, գորգեր, բյուրեղապակի և այլն։

(19-րդ դար վերջ-20-րդ դարի սկիզբ-21-րդ դար)

ՄԻՆՉՀԱՐՍԱՆԵԿԱՆ և ԵՏՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԾԻՍԱԿԱՆ ՎԱՐՔԸ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հարսանեկան են այն բոլոր ծիսական արարողությունները և ձևերը, որոնցով ապահովվում են տղամարդու և կնոջ սեռական կապի հարատև կայունությունն ու ամրությունը, նոր սերունդ ստեղծելու նպատակը (Լիսիցյան՝ Շագոյանի գործում, 2011, էջ 563):

«Շատերն են փորձել վերականգնել «իսկական» կամ «իդեալական» հայոց հարսանիքը, որը սովորաբար փնտրում են դարերի խորքում: Թվում է՝ եղել է մի ժամանակ, երբ ապրել են «մաքուր» հայեր, ում ծեսերը եղել են «իսկական հայկական», և հետո եկել են այլևայլ ցեղեր ու ժողովուրդներ և «պղտորել» իսկական, մաքուր հայ «արտադրող» այդ ջինջ ակունքները: Սա թյուր պատկերացում է և լիովին անընդունելի:» (Շագոյան, էջեր 12-13)

Ավանդական հասարակությունում ամուսնությունն ընդհանրապես ավելի հիշեցնում է տնտեսական գործարք, քան երկու անհատի զգացմունքներից ծնված միասնություն, թեև նման դեպքեր նույնպես պատահում էին՝ չնայած դրանք ավելի շուտ բացառություն էին, քան օրինաչափություն (Շագոյան, 2011, էջ 137):

Հայ ավանդական հասարակության մեջ ամուսնության հետ կապված հարցերը կարգավորում էին հիմնականում նորապսակների ծնողները: Նրանք ոչ միայն կարող էին հաշվի չառնել ամուսնացողների կարծիքը, այլև ապագա ամուսիններին նույնիսկ տեղյակ չպահել արդեն ընթացող խնամիական բանակցությունների մասին՝ չբացառելով ամուսնությունն առանց փեսայի ներկայության: Դաստիարակված երիտասարդից ակնկալվում էր նրա հնազանդությունն արտահայտող միայն մեկ պատասխան. «Դուք հավանել եք, էլ ես ի՞նչ կարող եմ ասել»: Այդ առիթով տղայի հետ խոսողն անպայման մայրն էր, որովհետև տղան հորից այնքան էր ամաչում, որ նման հարցի շուրջ նրա հետ խոսելն ուղղակի անհնար էր: Սեփական ամուսնության հարցը կարող էին իրենք կարգավորել միայն ծնողազուրկ և ինքնուրույն կյանք վարող տղաները:

Հարսնացու ընտրելիս սովորաբար առաջնորդվում էին ոչ միայն և ոչ այնքան հարսնացուի բարեմասնություններով ու առաքինություններով, որքան նրա մոր և հոր գերդաստանի մասին տեղեկություններով: Տղայի մասին կարծիք կազմելիս նույնպես հաշվի էր առնվում հոր համբավը (Շագոյան, 2011, էջ 43):

Հարսանեկան ծեսի անբաժանելի մասն էին կազմում խնամիացող կողմերի՝ հարսանիքին նախորդող բանակցությունները (Շագոյան, 2011, էջ 44):

Ավանդական հասարակության մեջ աղջիկների կյանքն ընթանում էր զգալիորեն սահմանափակ տարածքում: Նրանց հնարավոր էր տեսնել, օրինակ, բացօթյա տոնախմբությունների, ուխտագնացությունների և այլ ծիսական միջոցառումների ժամանակ, աղբյուրից ջուր բերելիս, այգիներում բերքահավաքին մասնակցելիս և անտառներում պտուղ հավաքելիս, արտերում քաղհան անելիս, իսկ քաղաքներում աղջիկ ընտրելու լավագույն վայրերից էին համարվում քաղաքային բաղնիքները (Շագոյան, 2011, էջ 46):

Մինչհարսանեկան և ետհարսանեկան ծեսերը ավանդական հայ հասարակության մեջ

«Խնամախոսություն» — Հարսնացու սովորաբար ընտրում էին իրենց տարածաշրջանից կամ հարևան գյուղից:

«Խոսքկապը» համաձայնությունը ստանալուց հետո էր լինում:

«Նշանադրություն»

«Հղե կտրել» ամուսնացող կողմերը պայմանավորվում են հարսանիքի ժամկետի շուրջ:

«Հալավօրհներքի» ժամանակ օրհնվում էին հարսի ու փեսայի մատանիները:

«Բոյչափեքի» ծեսը. հարսնացուի հարսանեկան շորերը , քողը, կարմիր ոտնամանները փեսացուի կողմն էր պատրաստում ու տանում, ուստի հարսանիքին նախորդող օրերից մեկի ընթացքում տղայի տանն էին հավաքվում նրա բարեկամ կանայք և կատարում էին

«Շորձևքի»-ի ավանդույթը՝ հարսի շորը ձևելու արարողություն, երբ կանայք հարսանեկան զգեստը ձևելիս կտորից մի փոքր հատված կտրում էին և աղջիկներից յուրաքանչյուրին տալիս ինչ-որ մաս կարելու առաջադրանք:

«Ազբանստում» հարսանիքին նախորդող օրը փեսայի ամուրի ընկերների միջև աճուրդով որոշվում է ազապբաշին՝ մակարապետը: Այժմ փեսան պարզապես ընտրում է հարսանիքի մակարապետին:

«Հինա-տանենք» ազապները և ազապբաշին ընտրելուց կամ նշանակելուց հետո տեղի էր ունենում հինա-տանենքը, որը խորհուրդներով լի և բավականին գեղեցիկ ծես էր:

«Փեսացուի շնորհօրհնեք» փեսայի սափրման և թագադրման՝ բավականին գունեղ ծեսերը , որը հինա տանելուց անմիջապես հետո էր տեղի ունենում:

«Տաշտադրեքի» ծես՝ բուն արարողությունից երկու օր առաջ փեսացուի տանը հարսանիքի հացն էին թխում:

«Նաղարազուռնայով հարսանիքը անցկացնելու թույլտվություն», երբ փեսացուի ազգականներից մեկը սգավոր էր լինում, հայրը, մայրը պարտադիր գնում էր նրանց տուն և հարսանիքը նաղարազուռնայով անցկացնելու թույլտվություն էր խնդրում:

«Եզմորթեքի» ծեսը հաց թխելու հաջորդ առավոտյան էր տեղի ունենում. փեսացուի տնից մարդ էին ուղարկվում՝ բարեկամներին և ծանոթներին նույն օրվա երեկոյան հարսանիքին հրավիրվելու համար:

Նույն օրը փեսացուն իր մի քանի ընկերների հետ գնում էր գերեզմանատուն, իրենց հին ու նոր ննջեցյալների հոգուն արքայություն բարեմաղթում և վերադառնում:

«Հարսնառ» (հարսի հետևից ուղևորվող փեսայի կողմի պատվիրակության ծիսական երթ) գնալուց առաջ քավորի հետևից երաժիշտների ուղեկցությամբ պատվիրակություն է ուղարկվում:

Երբ հարսանքավորների մեծ մասը եկած էր լինում, մի ծերունի և մի խումբ երիտասարդներ, մի-մի վառած մեղրամոմ ձեռներին գնում էին քավորին բերելու:

Քավորը կրում էր սպիտակ, կանաչ, կարմիր գույների ժապավեններով ուսկապ: Երբ նա նաղարայի դղրդոցով մտնում էր հարսանքատուն, բոլորը ոտքի էին կանգնում: Հնում հարսանեկան մեքենաների թափորը չէր կարող բաղկացած չլինել «աղվեսից». որը պետք է նախապես լուր հասցներ հարսի ընտանիքին հարսնաքավորների գալու մասին: **«Աղվեսին»** թշնաբար էին դիմավորում, քանի որ նրա առաջադրանքներից մեկը հավանոցից հավ գողանալն էր: Հետագայում հավն ուղղակի նրան պարգևատրում էին՝ լուրը հասցնելու համար:

«Կոխ բռնելու» ավանդույթ՝ փեսայի ծնողների կամ ընտանիքի տարեցների միջև մենամարտ փեսայի տան բակում նորապսակներին դիմավորելու ժամանակ, որտեղ, որպես կանոն, հաղթում է կինը:

Հարսին «մեղրը հրամցնում» էին գդալի հակառակ կողմով, որ «լեզուն կարճ լինի»:

«Հարսանեկան երգեր ու պարերգեր» — թեմաները վերաբերել են փեսային ու հարսին, նրանց ծնողներին, ընկերներին ու ընկերուհիներին, ծեսի մյուս «դերակատարներին», պարզապես հանդիսականներին, հատուկ արարողություններին. լրջությամբ են առանձնանում փեսային ու նրա ծնողներին նվիրված «Մեր թագվորն էր խաչ» և «Գացեք բերեք թագվորամեր» երգերը, խոր հնությամբ են բուրում «Վարդ, զքե չըմ սիրի» հարսին գովերգող ու մխիթարող և «Դուն հալալ մերիկ» նրա հրաժեշտի երգերը, հատկապես հետաքրքրական են ծաղկոց երգերը, որ երգում են հարսնացուի մոտիկ ընկերուհիները, պսակի նախընթաց գիշերը մինչև լույս, նրան զուգելու, զարդարելու ժամանակ:

Ետհարսանեկան Ծեսերը

«Գլուխ լվա» որպես հարսանյաց վերջին ծես նշվում է հաջորդ շաբաթ օրը, երբ աղջկա մորն ու մի քանի բարեկամուհիների հրավիրում էին գլուխլվայի:

«Օժիտի արարողություն» կատարվում է հրապարակային, իսկ օժիտը բաղկացած էր անկողնուց , զգեստների մեծ հավաքածուից, ինչպես նաև կենցաղային այլ իրերից ու կահույքից

ԾԵՍԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Մատանիներ» , որոնք դրվում են փեսայի ու հարսի մատին, նրանց միության անքակտելիության նշանն են

«Վառվող մոմեր» հոգևոր ուրախության և աստվածատուր շնորհ:

«Թագերը» ողջախոհության նշան են, քանզի Պսակը սուրբ է:

«Գինի խմելը» նշանակում է, որ նրանք իրենց համատեղ կյանքի թե՛ ուրախությունները և թե՛ դառնությունները միասին պետք է կիսեն և ճաշակեն:

«Մեղրը» խորհրդանշում է կյանքի քաղցրությունը:

«Կոտրում են նաև ափսեներ», որպեսզի խափանվի չարը:

Հայ արդի (ժամանակակից) հասարակության մեջ ամուսնության հետ կապված հարցերը կարգավորում են հիմնականում նորապսակները, խորհրդակցելով ծնողների հետ: Նրանք ունեն հստակ կարծիքը, խնամիական բանակցությունները փոխարինվել են աղջկա և տղայի ծնողների ծանոթության, ամուսնության արարողակարգի մասին զրույցի: Որոշակի ավանդական տարրեր պահպանվել են գյուղական համայնքներում:

Հարսնացու ընտրելիս սովորաբար առաջնորդվում են և՛ հարսնացուի բարեմասնություններով ու առաքինություններով, կրթվածությամբ և նրա ընտանիքի մասին տեղեկություններով: Տղայի մասին կարծիք կազմելիս նույնպես հաշվի էր առնվում նրա համբավը,վարքն ու բարքը,կրթությունն ու ընտանիքը:

Ժամանակակից հասարակության մեջ աղջիկների կյանքն զգալիորեն ազատ է,նրանք ուսման,աշխատանքի ազատ հնարավորություն ունեն: Նրանց հնարավոր էր տեսնել, բացօթյա տոնախմբությունների, ուխտագնացությունների,ճանապարհորդությունների և այլ միջոցառումների ժամանակ, ԲՈՒՀ-ում, զբոսայգիներում, հասարակական տրանսպորտում, սրճարաններում և այլ հասարակական վայրերում, գյուղական համայնքը չի տարբերվում քաղաքից:

Հարսանիքն նաև արդի հայ հասարակության մեջ հետաքրքրությունների բախում էր պարունակում: Հետաքրքրությունների բախման հիմնական պատճառը

ամուսնության նաև տնտեսական գործարք ընկալելն էր. Տղայի կամ աղջկա ունեցվածքի, շքեղ կամ համեստ հարսանեկան միջոցառում կազմակերպելու ժամանակակից նաև օտարամոլ տարրերի կիրառությունը: Շքեղ, գեղեցիկ ձևավորված հարսանեկան սրահ, մեծ տորթ,շքեղ յուրօրինակ հարսանեկան զգեստ (ներ),նվերներ,ավտոմեքենաներ,հրավառություն,հարսանեկան ճանապարհորդություն և այլն:

Հայկական հարսանեկան ավանդույթներից շատերն այսօր փոխվել են : Այսօր երիտասարդներն ինքնուրույն են ընտրում իրենց զուգընկերոջը:Երբեմն էլ կիրառվում են օտար ծեսերը. :Աղջիկները հագնում են ժամանակակից սպիտակ հարսանեկան զգեստներ, իսկ տղաները նախընտրում են դասական կոստյումներ: Այժմ հարսը փեսային սպասում է հատուկ ձևավորված սրահում:

Հնում օժիտի արարողությունը կատարվում էր հրապարակային և այն բաղկացած էր լինում անկողնուց, զգեստներից, կենցաղային իրերից, կահույքից, իսկ այժմ օժիտը փոխարինվել է տան, ավտոմեքենայի բանալիներով կամ մեղրամիսը որևէ երկրում անցկացնելու տոմսերով: Մոդեռն է համարվում նաև փեսային արաբական պորտապար կամ մերկապար նվիրելը՝ սովորաբար դա անում են փեսայի ընկերները: Զևական բնույթ է կրում նաև հարսին հագցնելը, քանի որ հարսը պատրաստ է լինում մինչև խնամիների գալը: Կարևոր իրադարձություն է համարվում ֆիլմերից վերցված ծաղիկ նետելը, որը ոչ մի ավանդական արմատներ չունի: Օտար սովորույթներից վերցրած և այժմ հայկական հարսանիքի արարողակարգ է դարձել հարսանեկան ֆոտոսեսիան՝ նախապես ընտրված գեղեցիկ վայրերում: Այժմ կարող են ունենալ 3, 5 կամ 7 հարսնաքույր և նույնքան խաչեղբայր: Այժմ հարսանեկան արարողությունը տևում է մեկ օր: Հարսանիքն ավարտվում է ուշ երեկոյան հարսանեկան ՄԵԾ տորթի կտրման արարողությամբ:

ՊԱՀՊԱՆՎԱԾ ԾԵՍԵՐ

«Հարսի կոշիկի մի զույգի գողություն» հարսի ազգականներից մեկն է անում , որը, իհարկե, վերադարձվում է երկար բանակցությունների արդյունքում մի կլորիկ գումար ստանալուց հետո:

«Դուռ բռնելը», երբ հարսի տան դռան մոտ հարսի եղբայրը սրով պահում է դուռը՝ խոչընդոտելով քրոջ՝ տնից դուրս հանելը:

Շեմի ծեսերի մասն են կազմում նաև նորապսակների ուսերին լավաշ գցելը, մեղր հյուրասիրելը, նրանց գլխին ցորեն, քաղցրավենիք շաղ տալն ու ափսե կոտրելը:

Եզրակացություններ

Նախագծային մեթոդի կիրառությունը հիմնական դպրոցի տարբեր դասարաններում թույլ տվեց եզրակացնել, որ արդյունավետ է դպրոցական «Պատմություն» և «Հասարակագիտություն», << Իմ հայրենիքը>> առարկաների դասավանդման ժամանակ:Համաշխարհային պատմության «Ամբողջատիրական վարչակարգերը Եվրոպայում» թեման ուսումնասիրելիս նախագծային մեթոդով,ցույց է տվել աշակերտների մեծ ներգրավվածություն,ակտիվ մասնակցություն:Պատմության ,, հետքերի որոնում,, մեթոդը արդյունավետ է դեպքերի, իրադարձությունների պատմական փաստերի, պատմական աղբյուրների ուսումնասիրման ժամանակ;Նախագծային աշխատանքները կազմակերպումը հաջողված, արդիական մեթոդ է, որոնց կիրառումը զարգացնում է վերլուծական միտքը, կառուցողական ու գրագետ խոսքը, համատեղ աշխատանքային հմտությունները, պատասխանատվությունը;

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Պարադիգման» կրթական հիմնադրամ (2020)Գիրք պատմության ուսուցման .Ինչու՞,ինչպե՞ս; էջ 169-176

2. Համաշխարհային պատմություն նորագույն շրջան 9-րդ դասարան մաս1 /Ա. Ստեփանյան,Ա.Նազարյան, Ռ. Սաֆարյան.- Եր. «Զանգակ» հրատ. 2019, էջ29-34

3 .Պատմություն #5 ռեսուրսատուփ- քարտեր

4. Քաղաքացիական կրթություն.Ժողովրդավարության հիմնարար արժեքները Ս.Խաչատրյան,Ս.Պետրոսյան,Թ.Տեր-Մկրտչյան ուսումնական ձեռնարկ 1 էջ99-103